

Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2001 թվականի հունիսի 27-ի  
2001/42/ԵՀ հրահանգ

Շրջակա միջավայրի վրա որոշ ծրագրերի և նախագծերի ազդեցությունների  
գնահատման մասին

*Պաշտոնական տեղեկագիր L 197, 21.07.2001թ., էջեր. 0030 – 0037*

Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2001 թվականի հունիսի 27-ի 2001/42/ԵՀ  
հրահանգ

Շրջակա միջավայրի վրա որոշ ծրագրերի և նախագծերի ազդեցությունների  
գնահատման մասին:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և,  
մասնավորապես, դրա 175(1) հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը (1),

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի  
եզրակացությունը (2),

հաշվի առնելով Տարածաշրջանային հարցերով կոմիտեի եզրակացությունը (3),

գործելով (4) Պայմանագրի 251–րդ հոդվածով սահմանված ընթացակարգի  
համաձայն և ելնելով Հաշտեցման կոմիտեի կողմից 2001 թվականի մարտի 21-ին  
հաստատված համատեղ տեքստից,

Քանի որ

1) Պայմանագրի 174–րդ հոդվածով նախատեսվում է, որ շրջակա միջավայրի  
վերաբերյալ Համայնքի քաղաքականությունը պետք է, մասնավորապես, նպաստի  
շրջակա միջավայրի պահպանմանը, պաշտպանությանը, վերջինիս որակի  
բարելավմանը, մարդու առողջության պաշտպանությանը, բնական ռեսուրսների  
խելամիտ և ռացիոնալ օգտագործմանը, և որ այն պետք է հիմնված լինի

նախազգուշական սկզբունքների վրա, Պայմանագրի 6-րդ հոդվածով նախատեսվում է, որ շրջակա միջավայրի պաշտպանության պահանջները պետք է ընդգրկվեն Համայնքի քաղաքականության և գործունեության մեջ՝ մասնավորապես նպատակ ունենալով խթանելու վերջիններիս կայուն զարգացումը,

2) «Շրջակա միջավայրի կայունությանն ուղղված գործողությունների հինգերորդ ծրագիր»– Շրջակա միջավայրի վերաբերյալ քաղաքականության, գործողությունների և կայուն զարգացման մասին Եվրոպական համայնքի ծրագիրը (5)՝ վերանայման արդյունքում լրացված Խորհրդի թիվ 2179/98/ԵՀ որոշմամբ (6), հաստատում է ծրագրերի և նախագծերի՝ շրջակա միջավայրի վրա հավանական ազդեցությունների գնահատման անհրաժեշտությունը,

3) «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիան պահանջում է, որ կողմերը կենսաբանական բազմազանության հիմնավորված օգտագործումը և պահպանությունը հարկ եղած դեպքում հնարավորինս ընդգրկվեն սեկտորային և միջսեկտորային ծրագրերի ու նախագծերի մեջ,

4) շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը կարևոր գործիք է՝ շրջակա միջավայրի վերաբերյալ դիտարկումները այն ծրագրերի և նախագծերի նախապատրաստման ու ընդունման գործընթացներում ընդգրկելու համար, որոնք հավանական է, որ էական ազդեցություն կունենան անդամ պետությունների շրջակա միջավայրի վրա, և որովհետև այն երաշխավորում է իրականացվող ծրագրերի և նախագծերի այդօրինակ ազդեցությունների հաշվի առնումը վերջիններիս նախապատրաստման ընթացքում և նախքան դրանց ընդունումը,

5) շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ընթացակարգերի հաստատումը ծրագրման և նախագծման փուլում օգնում է կազմակերպություններին՝ վերջիններիս ապահովելով գործողությունների ավելի հետևողական համակարգով, որը ենթադրում է շրջակա միջավայրի վերաբերյալ համապատասխան տեղեկատվության ներառում որոշման կայացման գործընթացում: Մի շարք ավելի ընդարձակ գործոնների ներառումը որոշման

կայացման գործընթացում հանգեցնում է ավելի կայուն և արդյունավետ լուծումների,

6) բնապահպանական և անդամ պետություններում գործող տարբեր գնահատման համակարգերը պետք է պարունակեն մի շարք ընդհանուր ընթացակարգային պահանջներ, որոնք անհրաժեշտ են՝ շրջակա միջավայրի բարձր մակարդակով պաշտպանությանն օժանդակելու համար,

7) Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպայի հարցերով տնտեսական հանձնաժողովի անդրսահմանային համատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին 1991 թվականի փետրվարի 25-ի եվրոպական կոնվենցիան, որը կիրառվում է ինչպես անդամ պետությունների, այնպես էլ այլ պետությունների նկատմամբ, քաջալերում է Կոնվենցիայի Մասնակիցների կողմից իր սկզբունքների կիրառումը նաև ծրագրերում և նախագծերում, Սոֆիայում 2001 թվականի փետրվարի 26-ին և 27-ին կայացած Կոնվենցիայի Մասնակից երկրների երկրորդ հանդիպման ընթացքում որոշվել է կազմել շրջակա միջավայրի ռազմավարական գնահատման մասին իրավաբանորեն պարտադիր արձանագրություն, որը կլրացնի անդրսահմանային համատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ գործող դրույթները և ակնկալվում է, որ կընդունվի նախարարների մակարդակով «Եվրոպայի շրջակա միջավայրը» թեմայով 5-րդ համաժողովի առիթով 2003 թվականի մայիսին, Կիևում, (Ուկրաինա), նախատեսված Կոնվենցիայի Մասնակիցների արտահերթ հանդիպման ընթացքում: Շրջակա միջավայրի վրա ծրագրերի և նախագծերի ազդեցության գնահատման համար նախատեսված, Համայնքում գործող համակարգերը պետք է ապահովեն անդրսահմանային համատեքստում մեկ անդամ պետությունում կազմված ծրագրերի և նախագծերի իրականացման արդյունքում մեկ այլ անդամ պետության շրջակա միջավայրի վրա դրանց հավանական էական ազդեցությունների վերաբերյալ համապատասխան խորհրդակցությունների անցկացումը: Մեկ այլ պետության շրջակա միջավայրի վրա էական ազդեցություն ունեցած ծրագրերի և նախագծերի մասին տեղեկատվությունն անդամ պետությունների և այլ պետությունների միջև պետք է

փոխանցվի փոխադարձ ու համարժեք հիմունքներով և իրավական համապատասխան կառուցվածքով,

8) անհրաժեշտ է գործողություն ձեռնարկել Համայնքի մակարդակով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մինիմում համակարգի սահմանման ուղղությամբ, որտեղ կսահմանվեն շրջակա միջավայրի գնահատման համակարգի ընդարձակ սկզբունքները և, հաշվի առնելով սուբսիդիարության սկզբունքը, մանրամասները կրթողնվեն անդամ պետություններին: Համայնքի կողմից ձեռնարկված ցանկացած գործողություն պետք է միտված լինի միայն սույն Պայմանագրի նպատակների իրականացմանը,

9) սույն Հրահանգն ընթացակարգային բնույթ ունի և դրա պահանջները պետք է կամ ընդգրկվեն անդամ պետություններում գործող ընթացակարգերում կամ միավորվեն հատուկ սահմանված ընթացակարգերին: Նպատակ ունենալով խուսափելու գնահատման կրկնօրինակումից՝ անդամ պետությունները պետք է համապատասխան դեպքերում հաշվի առնեն, այն փաստը, որ գնահատման գործընթացը կիրականացվի ծրագրերի և նախագծերի հիերարխիայի տարբեր մակարդակներում,

10) բոլոր այն ծրագրերն ու նախագծերը, որոնք կազմված են մի շարք ոլորտների համար և սահմանում են կոնկրետ պետական և մասնավոր ծրագրերի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին Խորհրդի 1992 թվականի մայիսի 21-ի 92/43/ԵՏՀ հրահանգի I և II հավելվածներում նշված ծրագրերի հետագա զարգացման շուրջ համաձայնության շրջանակը, ինչպես նաև այն բոլոր ծրագրերն ու նախագծերը, որոնք որոշված են, որ համաձայն բնական միջավայրի, վայրի ֆլորայի և ֆաունայի պահպանման մասին (8) Խորհրդի 1992 թվականի մայիսի 21-ի 92/43/ԵՏՀ հրահանգի, գնահատում են պահանջում, ենթադրվում է, որ էական ազդեցություն ունեն շրջակա միջավայրի վրա և, որպես կանոն, պետք է պարբերաբար ենթարկվեն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման: Փոքր տարածքների տեղական մակարդակով օգտագործումը սահմանող ծրագրերն ու նախագծերը, ինչպես նաև դրանց հետ կապված չնչին փոփոխությունները պետք է գնահատվեն միայն այն դեպքում, երբ անդամ

պետությունները որոշում են, որ դրանք կարող են էական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա,

11) մյուս ծրագրերն ու նախագծերը, որոնք սահմանում են ծրագրերի հետագա զարգացման շուրջ համաձայնության շրջանակը, բոլոր դեպքերում չէ, որ կարող են էական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա և պետք է գնահատվեն միայն այն դեպքում, երբ անդամ պետությունները որոշում են, որ գոյություն ունի այդպիսի ազդեցություն հավանականություն,

12) նմանատիպ որոշումներ կայացնելիս անդամ պետությունները պետք է հաշվի առնեն սույն Հրահանգով նախատեսված համապատասխան չափանիշները,

13) որոշ ծրագրեր և նախագծեր, պայմանավորված իրենց առանձնահատկություններով, չեն նախատեսվում սույն Հրահանգով,

14) սույն Հրահանգից առաջացած գնահատման անհրաժեշտության դեպքում, պետք է պատրաստվի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ և սույն Հրահանգով նախատեսված համապատասխան տեղեկատվություն պարունակող հաշվետվություն, որը կբացահայտի, կնկարագրի և կգնահատի ծրագրերի և նախագծերի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հավանական էական ազդեցությունը և հիմնավորված այլընտրանքային տարբերակները՝ հաշվի առնելով ծրագրի և նախագծի նպատակներն ու գործողության աշխարհագրական սահմանները, անդամ պետությունները Հանձնաժողովին պետք է հայտնեն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության որակի առնչությամբ իրենց կողմից ձեռնարկված ցանկացած միջոցի մասին,

15) նպաստելու համար որոշումների կայացման գործընթացի առավել թափանցիկությանը և նպատակ ունենալով համոզվելու, որ գնահատման համար տրամադրված տեղեկատվությունն ընդգրկուն է և արժանահավատ՝ անհրաժեշտ է իրավասու մարմինների համար նախատեսել շրջակա միջավայրի նկատմամբ համապատասխան պատասխանատվություններ, ինչպես նաև ապահովել ծրագրերի և նախագծերի գնահատման ընթացքում հանրության հետ քննարկումների անցկացումը և համապատասխան ժամկետների սահմանումը,

որով բավարար ժամանակ կհատկացվի քննարկումներին և կարծիքների արտահայտմանը,

16) այն դեպքում, երբ մեկ անդամ պետությունում կազմված ծրագրի կամ նախագծի իրականացումը հավանական է, որ էական ազդեցություն կունենա մեկ այլ անդամ պետության շրջակա միջավայրի վրա, դրույթ պետք է նախատեսվի, համաձայն որի տվյալ անդամ պետությունները կմասնակցեն քննարկումների, իսկ համապատասխան իրավասու մարմինները, ինչպես նաև հանրությունը տեղեկացված կլինեն և իրավունք կունենան արտահայտելու իրենց կարծիքը,

17) շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը, համապատասխան իրավասու մարմինների և հանրության արտահայտած կարծիքները, ինչպես նաև ցանկացած անդրսահմանային քննարկումների արդյունքները պետք է հաշվի առնվեն ծրագրի կամ նախագծի կազմման ընթացքում՝ նախքան դրանց ընդունումն ու օրենսդրական ընթացակարգեր անցնելը,

18) անդամ պետությունները, որևէ ծրագիր կամ նախագիծ ընդունելիս, պետք է համոզվեն, որ համապատասխան իրավասու մարմիններին և հանրությանը տրամադրվել է համարժեք տեղեկատվություն և որ վերջիններս տեղեկացված են,

19) այն դեպքում, երբ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման պարտականությունը միաժամանակ բխում է, ինչպես սույն Հրահանգից, այնպես էլ Համայնքի այլ օրենսդրությունից, ինչպիսիք են «Վայրի թռչունների պահպանության մասին» Խորհրդի 1979 թվականի ապրիլի 2-ի 79/409/ԵՏՀ հրահանգը (9), Ջրային քաղաքականության ոլորտում Համայնքի գործողությունների շրջանակ հաստատող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2000 թվականի հոկտեմբերի 23-ի 2000/60/ԵՀ հրահանգը (10), ապա գնահատման կրկնօրինակումից խուսափելու համար անդամ պետությունները կարող են նախատեսել Համայնքի համապատասխան օրենսդրության պահանջները բավարարող համակարգված և համատեղ ընթացակարգեր,

20) սույն Հրահանգի իրականացման և արդյունավետության վերաբերյալ առաջին հաշվետվությունը Հանձնաժողովի կողմից պետք է կազմվի, Հրահանգն ուժի մեջ

մտնելուց հինգ տարի անց և այնուհետ՝ յոթ տարին մեկ անգամ: Նպատակ ունենալով հետագայում միավորել շրջակա միջավայրի պաշտպանության պահանջները և հաշվի առնելով ձեռք բերված փորձը, առաջին հաշվետվությունը, հարկ եղած դեպքում, պետք է ուղեկցվի, մասնավորապես, սույն Հրահանգի գործողության սահմանները դեպի այլ բնագավառներ/հատվածներ, ինչպես նաև այլ ծրագրեր և նախագծեր ընդարձակելու մասով փոփոխություններ կատարելու առաջարկներով,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

## **Հոդված 1**

### **Նպատակները**

Սույն Հրահանգի նպատակն շրջակա միջավայրի բարձր մակարդակով պաշտպանությունն ապահովելը և դրա վերաբերյալ դիտարկումների ընդգրկմանը ծրագրերի ու նախագծերի նախապատրաստման և ընդունման գործընթացներին նպաստելն է՝ նպատակ ունենալով խթանելու կայուն զարգացումը, ինչպես նաև ապահովելով, որ համաձայն սույն Հրահանգի, շրջակա միջավայրի գնահատումն իրականացվի կոնկրետ այն ծրագրերի և նախագծերի նկատմամբ, որոնք հավանական է, որ էական ազդեցություն կարող են ունենալ շրջակա միջավայրի վրա:

## **Հոդված 2**

### **Հասկացությունները**

Սույն Հրահանգի նպատակներով՝

ա) «ծրագրեր և նախագծեր» նշանակում են ծրագրեր և նախագծեր՝ ներառյալ այնպիսիները, որոնք համաֆինանսավորվում են Եվրոպական համայնքի կողմից, ինչպես նաև դրանց ցանկացած փոփոխությունը՝

- որոնք ենթակա են նախապատրաստման և(կամ) ընդունման ազգային, տարածքային կամ տեղական մակարդակով որևէ մարմնի կողմից կամ այնպիսիները, որոնք որևէ մարմնի կողմից կազմվել են Պառլամենտի կամ Կառավարության կողմից օրենսդրական ընթացակարգով ընդունման համար և

- որոնք պահանջվում են օրենսդրական, կարգավորիչ կամ վարչական դրույթներով,

բ) «շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում» նշանակում են շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հաշվետվության պատրաստում, քննարկումների իրականացում, դրանց արդյունքների և նշված հաշվետվության հաշվի առնում՝ որոշման կայացման ընթացքում, ինչպես նաև 4-րդ և 9-րդ հոդվածների համաձայն՝ տվյալ որոշման վերաբերյալ տեղեկատվության տրամադրում,

գ) «շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն» նշանակում է ծրագրի կամ նախագծի փաստաթղթերի այն մասը, որը պարունակում է 5-րդ հոդվածով և I հավելվածով պահանջվող տեղեկատվությունը, «հասարակություն» նշանակում է մեկ կամ մի քանի ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, ինչպես նաև ազգային օրենսդրության կամ փորձի համաձայն՝ վերջիններիս ասոցիացիաները, կազմակերպությունները կամ խմբերը:

### **Հոդված 3**

#### **Գործողության ոլորտը**

1. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը, համաձայն 4-րդ և 9-րդ հոդվածների, իրականացվում է 2-րդ և 4-րդ պարբերություններում նշված այն ծրագրերի և նախագծերի նկատմամբ, որոնք հավանական է, որ էական ազդեցություն կունենան շրջակա միջավայրի վրա:

2. 3-րդ պարբերության դրույթների պահպանմամբ՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումն իրականացվում է բոլոր այն ծրագրերի և նախագծերի նկատմամբ՝

ա) որոնք նախատեսված են գյուղատնտեսության, անտառամշակման, ձկնարդյունաբերության, էներգետիկայի, արդյունաբերության, տրանսպորտի, թափոնների, ինչպես նաև ջրային ռեսուրսների կառավարման, հեռահաղորդակցության, զբոսաշրջության, քաղաքաշինության և գյուղերի



ծրագրման, հողօգտագործման համար և որոնք սահմանում են 85/337/ԵՏՀ հրահանգի I և II հավելվածներում թվարկված ծրագրերի հետագա զարգացման շուրջ համաձայնության շրջանակը.

բ) որոնց համար, հաշվի առնելով տեղանքների վրա դրանց հնարավոր ազդեցությունը, որոշվել է, որ պահանջվում է գնահատում՝ համաձայն 92/43/ԵՏՀ հրահանգի 6-րդ և 7-րդ հոդվածների:

3. 2-րդ պարբերության մեջ նշված և փոքր տարածքների տեղական մակարդակով օգտագործումը սահմանող ծրագրերն ու նախագծերը, ինչպես նաև դրանց հետ կապված չնչին փոփոխությունները, պահանջում են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում միայն այն դեպքում, երբ անդամ պետությունները որոշում են, որ դրանք կարող են էական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա:

4. Անդամ պետությունները որոշում են 2-րդ պարբերության մեջ նշված, ծրագրերի հետագա զարգացման շուրջ համաձայնության շրջանակը սահմանող ծրագրերից և նախագծերից տարբեր՝ այլ ծրագրերի և նախագծերի՝ շրջակա միջավայրի վրա ունեցած էական ազդեցության հավանականությունը:

5. Անդամ պետությունները 3-րդ և 4-րդ պարբերությունների մեջ նշված ծրագրերի կամ նախագծերի՝ շրջակա միջավայրի վրա ունեցած էական ազդեցության հավանականությունը որոշում են կամ կոնկրետ դեպքերի ուսումնասիրության, ծրագրերի և նախագծերի տեսակների հատկորոշման և կամ երկու մոտեցման համակցման միջոցով: Այդ նպատակով անդամ պետությունները բոլոր դեպքերում հաշվի են առնում II հավելվածով նախատեսված համապատասխան չափանիշները՝ ապահովելով շրջակա միջավայրի վրա էական ազդեցություն ունեցող ծրագրերի և նախագծերի սույն Հրահանգով կարգավորումը:

6. Կոնկրետ դեպքերի ուսումնասիրության և 5-րդ պարբերության համաձայն ծրագրերի և նախագծերի հատկորոշման դեպքերը քննարկվում են 6(3) հոդվածում նշված իրավասու մարմինների հետ:

7. Անդամ պետություններն ապահովում են 5-րդ պարբերության համաձայն իրենց եզրակացությունների, այդ թվում 4-րդ և 9-րդ հոդվածների համաձայն շրջակա

միջավայրի վրա ազդեցության գնահատում չպահանջվելու պատճառների՝ հանրության համար մատչելիությունը:

8. Սույն Հրահանգով չեն նախատեսվում հետևյալ ծրագրերն ու նախագծերը՝

- այն ծրագրերն ու նախագծերը, որոնց հիմնական նպատակը ազգային պաշտպանությանը կամ քաղաքացիական արտակարգ դրությանը ծառայելն է.
- ֆինանսական կամ բյուջետային ծրագրերն ու նախագծերը:

9. Սույն Հրահանգը չի կիրառվում ընթացիկ համապատասխան նախագծերի մշակման ժամանակահատվածում համաֆինանսավորվող Խորհրդի թիվ 1260/1999/ ԵՀ (12) և թիվ 1257/1999(13) կանոնակարգերի համար նախատեսված ծրագրերի և նախագծերի նկատմամբ:

#### **Հոդված 4**

##### **Ընդհանուր պարտավորությունները**

1. 3-րդ հոդվածում նշված շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումն իրականացվում է ծրագրի կամ նախագծի կազմման ընթացքում՝ նախքան դրա ընդունումն ու օրենսդրական ընթացակարգեր անցնելը:

2. Սույն Հրահանգի պահանջները՝ ծրագրերի և նախագծերի ընդունման համար կամ պետք է ընդգրկվեն անդամ պետություններում գործող ընթացակարգերում, կամ միավորվեն սույն Հրահանգին համապատասխան սահմանված ընթացակարգերին:

3. Ծրագրերի և նախագծերի հիերարխիայի մաս կազմելու դեպքում անդամ պետությունները, նպատակ ունենալով խուսափելու գնահատման կրկնօրինակումից, հաշվի են առնում այն փաստը, որ գնահատումը, համաձայն սույն Հրահանգի, իրականացվելու է հիերարխիայի տարբեր մակարդակներում: Անդամ պետությունները, մասնավորապես, գնահատման կրկնօրինակումից խուսափելու նպատակով, կիրառում են 5(2) և 5(3) հոդվածները:

## Հոդված 5

### Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը

1. 3(1) հոդվածի համաձայն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման պահանջի դեպքում պատրաստվում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, որի մեջ բացահայտվում, նկարագրվում և գնահատվում են ծրագրի կամ նախագծի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հավանական էական ազդեցությունները և հիմնավորված այլընտրանքային տարբերակները՝ հաշվի առնելով ծրագրի կամ նախագծի նպատակներն ու գործողության աշխարհագրական սահմանները: Այդ նպատակով տրամադրվող տեղեկատվության մասին նշված է I հավելվածում:

2. 1-ին պարբերության համաձայն պատրաստված շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը ներառում է այն տեղեկատվությունը, որը հիմնավորված կերպով կարող է պահանջվել՝ հաշվի առնելով գնահատման համար անհրաժեշտ ներկայիս գիտելիքները և մեթոդները, ծրագրի և նախագծի բովանդակությունն ու մանրամասները, որոշումների կայացման գործընթացում դրա ազդեցության մակարդակը և գնահատման կրկնօրինակումից խուսափելու նպատակով այդ գործընթացի տարբեր մակարդակներում որոշ խնդիրների ավելի ճշգրիտ գնահատման աստիճանը:

3. Ծրագրերի և նախագծերի շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ առկա և որոշման կայացման գործընթացի այլ փուլերում ձեռք բերված կամ Համայնքային այլ օրենսդրությունից քաղված համապատասխան տեղեկատվությունը կարող է օգտագործվել I հավելվածում նշված տեղեկատվության տրամադրման համար:

4. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության մեջ ներառվելիք տեղեկատվության մանրամասները և գործողության սահմանները որոշելիս պետք է խորհրդակցել 6(3) հոդվածում նշված իրավասու մարմինների հետ:

## Հոդված 6

### Քննարկումները

1. Ծրագրի և նախագծի նախնական օրինակը և 5-րդ հոդվածի համաձայն պատրաստված շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը պետք է մատչելի լինեն սույն հոդվածի 3-րդ պարբերության մեջ նշված իրավասու մարմինների, ինչպես նաև հանրության համար:
2. 3-րդ պարբերության մեջ նշված իրավասու մարմիններին և 4-րդ պարբերության մեջ նշված հանրությանը համապատասխան ժամկետներում ծրագրի կամ նախագծի նախնական օրինակի և դրան կից շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ իրենց կարծիքը նախապես արտահայտելու արդյունավետ հնարավորություն է տրվում՝ նախքան ծրագրի կամ նախագծի ընդունումը կամ օրենսդրական ընթացակարգեր անցնելը:
3. Անդամ պետությունները նշանակում են իրավասու մարմինների, որոնց հետ կարելի է խորհրդակցել՝ ելնելով շրջակա միջավայրի նկատմամբ նրանց կոնկրետ պատասխանատվությունից, ինչպես նաև ծրագրերի և նախագծերի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա ազդեցության խնդիրների հետ նրանց հավանական առնչությունից:
4. 2-րդ պարբերության նպատակով անդամ պետությունները պետք է բացահայտեն հանրության այն հատվածներին, որոնց վրա ազդել, կամ հնարավոր է, որ ազդեցություն ունենա սույն Հրահանգով նախատեսված որոշման կայացման գործընթացը և կամ որոնք իրենց հետաքրքրությունն ունեն դրանում՝ ներառյալ շրջակա միջավայրի պաշտպանությունը խթանող համապատասխան ոչ կառավարական և այլ կազմակերպություններ:
5. Անդամ պետություններն են սահմանում իրավասու մարմիններին և հանրությանը տեղեկատվություն տրամադրելու և նրանցից խորհրդատվություն ստանալու մանրամասն միջոցառումները:

## Հոդված 7

### Անդրասահմանային քննարկումները

Այն դեպքում, երբ որևէ անդամ պետություն գտնում է, որ իր տարածքի համար կազմված ծրագրի կամ նախագծի իրականացումը հավանական է, որ էական ազդեցություն կունենա մեկ այլ անդամ պետության շրջակա միջավայրի վրա, ապա այն, հավանական էական ազդեցության ենթարկվելիք անդամ պետության պահանջի դեպքում ևս, նախքան ծրագրի կամ նախագծի ընդունումը կամ օրենսդրական ընթացակարգեր անցնելը՝ դրանց նախնական օրինակը և համապատասխան՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը, պետք է փոխանցի այդ մյուս անդամ պետությանը:

2. 1-ին պարբերության համաձայն ծրագրի կամ նախագծի նախնական օրինակը և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը ստանալու դեպքում, նախքան ծրագրի կամ նախագծի ընդունումը կամ օրենսդրական ընթացակարգեր անցնելը, տվյալ անդամ պետությունը մյուս անդամ պետությանը պետք է հայտնի քննարկումներին մասնակցելու իր ցանկությունը, որի դեպքում համապատասխան անդամ պետությունները պետք է քննարկումներ անցկացնեն ծրագրի կամ նախագծի իրականացման հետևանքով շրջակա միջավայրի վրա հավանական անդրասահմանային ազդեցության և այդ ազդեցությունների նվազեցման ու վերացման համար նախատեսված միջոցների վերաբերյալ:

Նմանատիպ քննարկումների անցկացման դեպքում համապատասխան անդամ պետությունները պետք է համաձայնության գան այն մանրամասն միջոցների շուրջ, որոնք ապահովում են էական ազդեցության ենթարկվելու հավանականություն ունեցող անդամ պետության՝ 6(3) հոդվածում նշված իրավասու մարմինների և 6(4) հոդվածում նշված հանրության տեղեկացված լինելը և վերջիններիս իրենց կարծիքը հիմնավորված ժամկետներում ներկայացնելու հնարավորության ընձեռումը:

3. Սույն հոդվածի համաձայն՝ քննարկումներին մասնակցելու պահանջի դեպքում անդամ պետություններն այդ քննարկումների սկզբում պետք է համաձայնության

զան՝ հիմնավորված ժամկետներում քննարկումներն ավարտին հասցնելու վերաբերյալ:

## **Հոդված 8**

### **Որոշման կայացումը**

5-րդ հոդվածի համաձայն պատրաստված՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը, 6-րդ հոդվածի համաձայն արտահայտված կարծիքները և 7-րդ հոդվածի համաձայն ցանկացած անդրսահմանային քննարկման արդյունքները պետք է հաշվի առնվեն ծրագրի կամ նախագծի կազմման ընթացքում և, նախքան դրա ընդունումն ու օրենսդրական ընթացակարգեր անցնելը:

## **Հոդված 9**

### **Որոշման մասին տեղեկատվությունը**

1. Անդամ պետությունները պետք է ապահովեն ծրագրի կամ նախագծի ընդունման ժամանակ 6(3) հոդվածում նշված իրավասու մարմինների, հանրության և ցանկացած անդամ պետության, որի հետ խորհրդակցություն է անցկացվել՝ համաձայն 7-րդ հոդվածի, տեղեկացված լինելը և նրանց համար հետևյալների մատչելիությունը՝

ա) ընդունված ծրագիրը կամ նախագիծը.

բ) համառոտ հաշվետվություն այն մասին, թե ինչպես են շրջակա միջավայրի վերաբերյալ դիտարկումներն ընդգրկվել ծրագրի կամ նախագծի մեջ և թե ինչպես են հաշվի առնվել 5-րդ հոդվածի համաձայն պատրաստված շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը, 6-րդ հոդվածի համաձայն արտահայտված կարծիքները, 7-րդ հոդվածի համաձայն իրականացված քննարկումների արդյունքների 8-րդ հոդվածի համաձայն հաշվի առնելը և հանդիպած այլ հիմնավորված այլընտրանքային տարբերակների համատեքստում կոնկրետ այդ ընդունված ծրագրի կամ նախագծի ընտրության պատճառները, ինչպես նաև՝

գ) 10-րդ հոդվածի համաձայն իրականացվող դիտանցման վերաբերյալ ընդունված միջոցները:

2. Անդամ պետություններն են սահմանում 1-ին պարբերության մեջ նշված տեղեկատվության հետ կապված մանրամասն միջոցառումները:

#### Հոդված 10

##### Դիտանցումը

1. Անդամ պետությունները պետք է դիտանցեն ծրագրերի և նախագծերի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա էական ազդեցություններ՝ մասնավորապես, չկանխատեսված բացասական ազդեցությունները սկզբնական փուլում բացահայտելու և համապատասխան շտկման գործողություններ ձեռնարկելու համար:

2. 1-ին պարբերությանը համապատասխանելու համար, դիտանցման գոյություն ունեցող միջոցառումներն անհրաժեշտության դեպքում կարող են օգտագործվել՝ դիտանցման կրկնօրինակումից խուսափելու նպատակով:

#### Հոդված 11

##### Համայնքի այլ օրենսդրության հետ առնչությունը

1. Սույն Հրահանգի համաձայն իրականացված շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը չպետք է հակասի 85/337/ԵՏՀ հրահանգով և Համայնքի այլ օրենքով նախատեսված ցանկացած պահանջի:

2. Այն դեպքում, երբ ծրագրերի և նախագծերի առնչությամբ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման պարտականությունը միաժամանակ բխում է սույն Հրահանգից և Համայնքի այլ օրենսդրությունից, անդամ պետությունները կարող են նախատեսել Համայնքի համապատասխան օրենսդրության պահանջները բավարարող համակարգված և համատեղ ընթացակարգեր՝ մասնավորապես գնահատման կրկնօրինակումից խուսափելու համար:

3. Եվրոպական համայնքի կողմից համաֆինանսավորվող ծրագրերի և նախագծերի առնչությամբ ու սույն Հրահանգի համաձայն իրականացված շրջակա

միջավայրի վրա ազդեցության գնահատումն իրականացվում է Համայնքի համապատասխան օրենսդրության հատուկ դրույթների համաձայն:

## Հոդված 12

### Տեղեկատվության, հաշվետվությունների տրամադրումը և վերանայումը

1. Անդամ պետությունները և Հանձնաժողովը փոխանակում են սույն Հրահանգի կիրառման ընթացքում ձեռք բերված փորձի վերաբերյալ տեղեկություններ:
2. Անդամ պետություններն ապահովում են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունների, սույն Հրահանգի պահանջները բավարարող, բավարար որակի առկայությունը և Հանձնաժողովին տեղեկացնում են նշված հաշվետվությունների որակի առնչությամբ ձեռնարկված ցանկացած միջոցի մասին:
3. Հանձնաժողովը, մինչ 2006 թվականի հուլիսի 21–ը, Եվրոպական պառլամենտ և Խորհուրդ պետք է ուղարկի սույն Հրահանգի կիրարկման և արդյունավետության վերաբերյալ առաջին հաշվետվությունը:  
Պայմանագրի 6-րդ հոդվածի համաձայն՝ նպատակ ունենալով հետազայում միավորելու շրջակա միջավայրի պաշտպանության պահանջները և հաշվի առնելով անդամ պետություններում սույն Հրահանգի կիրառման ընթացքում ձեռք բերված փորձը՝ հարկ եղած դեպքում նշված հաշվետվությանը կից պետք է ներկայացվեն սույն Հրահանգում փոփոխություններ կատարելու մասին առաջարկներ: Հանձնաժողովը պետք է քննարկի, մասնավորապես, սույն Հրահանգի գործողության սահմանները դեպի այլ բնագավառներ/ուլորտներ, ինչպես նաև այլ ծրագրեր և նախագծեր ընդարձակելու հնարավորությունը:  
Նոր գնահատման հաշվետվությունը պետք է հաջորդի յոթ տարի անց:
4. Հանձնաժողովը սույն Հրահանգի և թիվ 1260/1999/ԵՀ, ինչպես նաև թիվ 1257/1999/ԵՀ կանոնակարգերի փոխհարաբերության մասին հաշվետվություն պետք է ներկայացնի այդ Կանոնակարգերով նախատեսված նախագծերի մշակման ժամկետների ավարտից դեռ շատ առաջ՝ նպատակ ունենալով



ապահովելու հետևողական մոտեցում սույն Հրահանգի և Համայնքի հաջորդող կանոնակարգերի նկատմամբ :

### Հոդված 13

#### Հրահանգի կիրարկումը

1. Անդամ պետությունները, նախքան 2004 թվականի հուլիսի 21-ը, գործողության մեջ են դնում սույն Հրահանգի հետ համապատասխանելու համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը և վարչական դրույթները: Նրանք այդ մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

2. Երբ անդամ պետություններն ընդունում են այդ միջոցները, դրանք պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին կամ ուղեկցվեն նման հղումով՝ դրանց պաշտոնական հրապարակման դեպքում: Այդպիսի հղում կատարելու մեթոդները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

3. 4(1) հոդվածում նշված պարտավորությունը կիրառվում է այն ծրագրերի և նախագծերի նկատմամբ, որոնց առաջին պաշտոնական նախնական ակտը հաջորդում է 1-ին պարբերության մեջ նշված ամսաթվին: Այն ծրագրերն ու նախագծերը, որոնց առաջին պաշտոնական նախնական ակտը նախորդում է այդ ամսաթվին և որոնք այնուհետ 24 ամիս անց ներկայացվել են օրենսդրական ընթացակարգերով անցնելու համար, պետք է ենթակա լինեն 4(1) հոդվածում նշված պարտավորությունների ստանձնմանը, եթե անդամ պետությունները, կոնկրետ իրավիճակից ելնելով, չեն որոշել, որ դա հնարավոր չէ և իրենց որոշման մասին չեն տեղեկացրել հանրությանը:

4. Մինչև 2004 թվականի հուլիսի 21-ը, անդամ պետությունները, ի հավելումն 1-ին պարբերության մեջ նշված միջոցների, Հանձնաժողովին պետք է առանձին տեղեկատվություն տրամադրեն այն ծրագրերի և նախագծերի տեսակների վերաբերյալ, որոնք սույն Հրահանգի 3-րդ հոդվածի համաձայն, ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման: Հանձնաժողովն այս

տեղեկությունը մատչելի պետք է դարձնի այլ անդամ պետությունների համար:  
Տեղեկատվությունը պետք է պարբերաբար թարմացվի:

#### **Հոդված 14**

##### **Ուժի մեջ մտնելը**

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում հրապարակվելու օրվանից:

#### **Հոդված 15**

##### **Հասցեատերերը**

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Լյուքսեմբուրգում, 2001 թվականի հունիսի 27-ին:

Եվրոպական պառլամենտի կողմից՝

Նախագահ

Ն. Ֆոնտեն

Խորհրդի կողմից՝

Նախագահ

Բ. Ռոսենգրեն

1) ՊՏ թիվ C 129, 25.04.1997թ., էջ 14 և

ՊՏ C 83, 25.03.1999թ., էջ 13

2) ՊՏ թիվ C 287, 22.09.1997թ., էջ 101:

3) ՊՏ թիվ C 64, 27.02.1998թ., էջ 63 և

ՊՏ C 374, 23.12.1999թ., էջ 9:

4) Եվրոպական պառլամենտի 1998 թվականի հոկտեմբերի 20–ի եզրակացություն (ՊՏ C 341, 09.11.1998թ., էջ 18)՝ հաստատված 1999 թվականի սեպտեմբերի 16–ին (ՊՏ C 54, 25.02.2000թ., էջ 76), Խորհրդի 2000 թվականի մարտի 30–ի ընդհանուր դիրքորոշում (ՊՏ C 137, 16.05.2000թ., էջ 11) և Եվրոպական պառլամենտի 2000 թվականի սեպտեմբերի 6–ի որոշում (ՊՏ C 135, 07.05.2001թ., էջ 155): Եվրոպական պառլամենտի՝ 2001 թվականի մայիսի 31–ի որոշում և Խորհրդի՝ 2001 թվականի հունիսի 5–ի որոշում:

5) ՊՏ թիվ C 138, 17.05.1993թ., էջ 5:

6) ՊՏ թիվ L 275, 10.10.1998թ., էջ 1:

7) OJ L 175, 05.07.1985թ, էջ 40: 97/11/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ L 73, 14.03.1997թ., էջ 5):

8) ՊՏ թիվ L 206, 22.07.1992թ., էջ 7: Վերջին անգամ 97/62/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ, L 305, 08.11.1997թ., էջ 42):

9) ՊՏ թիվ L 103, 25.04.1979թ., էջ 1: Վերջին անգամ 97/49/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ, L 223, 13.08.1997թ., էջ 9):

10) ՊՏ թիվ L 327, 22.12.2000թ., էջ 1:

11) Խորհրդի թիվ 1260/1999/ԵՀ կանոնակարգի նախագծի մշակման 2000-2006թթ.–ն ընկած ժամանակահատված և Խորհրդի թիվ 1257/1999 կանոնակարգի (ԵՀ) նախագծի մշակման 2000-2006թթ.–ը և 2000-2007թթ.–ն ընկած ժամանակահատվածներ:

12) Կառուցվածքային հիմնադրամների համար ընդհանուր դրույթներ սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 21–ի թիվ 1260/1999 կանոնակարգ (ԵՀ ) (ՊՏ L 161, 26.06.1999.թ., էջ 1):

13) «Գյուղատնտեսական ուղղորդման և երաշխիքների հիմնադրամի (ԳՈԻԵՀ) կողմից գյուղական զարգացման աջակցության մասին» Խորհրդի 1999 թվականի մայիսի 17–ի թիվ 1257/1999 կանոնակարգ (ԵՀ), որով փոփոխվում և ուժը կորցրած են ճանաչվում որոշ կանոնակարգեր (ՊՏ L 160, 26.06.1999թ., էջ 80):

## ՀԱՎԵԼՎԱԾ I

### 5(1) հոդվածում նշված տեղեկատվությունը

5(1) հոդվածի համաձայն՝ 5(2) և (3) հոդվածների պահպանմամբ տրամադրվելիք տեղեկատվություն՝ հետևյալի վերաբերյալ

ա) բովանդակության նկարագիր, ծրագրի կամ նախագծի հիմնական նպատակներ և այլ համապատասխան ծրագրերի ու նախագծերի հետ փոխհարաբերություն.

բ) շրջակա միջավայրի ներկա վիճակին համապատասխան հայեցակետեր և այնուհետ հավանական զարգացում՝ տվյալ ծրագրի կամ նախագծի չիրականացման դեպքում.

գ) Էական ազդեցության ենթարկվելու հավանականություն ունեցող տարածքների շրջակա միջավայրի բնութագիր.

դ) ծրագրի կամ նախագծի հետ կապ ունեցող առկա ցանկացած խնդիր՝ մասնավորապես, կապված շրջակա միջավայրի առումով հատուկ կարևորություն ունեցող ցանկացած այնպիսի տարածքի հետ, ինչպիսիք են 79/409/ԵՏՀ և 92/43/ԵՏՀ հրահանգներով սահմանված տարածքները.

ե) միջազգային, Համայնքի կամ անդամ պետության մակարդակով սահմանված շրջակա միջավայրի պաշտպանության ծրագրի կամ նախագծի հետ կապված նպատակներ, և ծրագրի կամ նախագծի կազմման ընթացքում այդ նպատակների և շրջակա միջավայրի վերաբերյալ ցանկացած դիտարկում հաշվի առնելու եղանակներ

զ) շրջակա միջավայրի վրա հավանական էական ազդեցության նկարագրություն (1), այդ թվում՝ կենսաբազմազանություն, բնակչություն, մարդկային առողջություն, ֆաունա, ֆլորա, հող, ջուր, օդ, կլիմայական գործոններ, նյութական ակտիվներ, մշակութային՝ ճարտարապետական և հնագիտական ժառանգություն, լանդշաֆտ և վերը նշված գործոնների միջև փոխհարաբերություն.

է) ծրագրի կամ նախագծի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա էական բացասական ազդեցությունները կանխելու, նվազեցնելու և,

հնարավորության դեպքում, կասեցնելու համար նախատեսվող միջոցների նկարագրություն.

ը) հանդիպած այլընտրանքային տարբերակների ընտրության պատճառների ամփոփ նկարագիր և գնահատման ձեռնարկման՝ այդ թվում նաև պահանջվող տեղեկատվության հավաքման ընթացքում հանդիպած ցանկացած դժվարության նկարագրություն (ինչպիսիք են տեխնիկական բացթողումները կամ *նոր-հատի* բացակայությունը).

թ) 10-րդ հոդվածի համաձայն նախատեսված դիտանցմանը վերաբերող միջոցների նկարագրություն.

ժ) վերը նշված վերնագրերի ներքո ներկայացվող տեղեկությունների ոչ տեխնիկական բնույթի ամփոփագիր:

1) Այս ազդեցությունները պետք է ներառեն երկրորդային, կուտակային, կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ, մշտական և ժամանակավոր, դրական և բացասական ազդեցություններ:

## ՀԱՎԵԼՎԱԾ II

### 3(5) հողվածում նշված հավանական ազդեցությունների կարևորությունը որոշող չափանիշ

1. Ծրագրերի և նախագծերի բնութագրերը՝ կապված, մասնավորապես, հետևյալի հետ՝

- գործունեության այլ տեսակների և նախագծերի համար ծրագրի կամ նախագծի կողմից գտնվելու վայրի, բնույթի, չափի, գործունեության պայմանների և կամ միջոցների բաշխման մասով կառուցվածքի սահմանման աստիճան.
- ինչպես հիերարխիայի, այնպես էլ այլ ծրագրերի և նախագծերի վրա ծրագրի կամ նախագծի ներգործման աստիճան .
- մասնավորապես, կայուն զարգացումը խթանելու նպատակով ծրագրի կամ նախագծի մեջ շրջակա միջավայրի վերաբերյալ դիտարկումների ընդգրկման հիմնավորում.
- ծրագրին կամ նախագծին առնչվող շրջակա միջավայրի խնդիրներ.
- ծրագրի կամ նախագծի կողմից շրջակա միջավայրի մասին Համայնքի օրենսդրության կիրառման հիմնավորում (օրինակ՝ թափոնների և ջրային ռեսուրսների կառավարման հետ կապված ծրագրեր և նախագծեր):

2. Հավանական ազդեցության ենթարկվելիք տարածքների բնութագրերը՝ կապված, մասնավորապես, հետևյալի հետ՝

- ազդեցության հավանականությունը, տևողությունը, հաճախականությունը և հետադարձելիությունը.
- ազդեցությունների հավաքական հատկանիշները.
- ազդեցությունների անդրսահմանային բնույթը.
- մարդկային առողջությանը և շրջակա միջավայրին սպառնող վտանգները (օրինակ՝ պայմանավորված պատահարներով).

-ազդեցությունների ուժգնությունը և տարածական ընդգրկումը ( հավանական ազդեցության ենթարկվելիք տարածքը և բնակչության թիվը).

- այն տարածքի կարևորությունը և խոցելիությունը, որը հավանական է, որ կենթարկվի ազդեցության՝ պայմանավորված հետևյալով՝

-բնական հատուկ հատկանիշներ կամ մշակութային ժառանգություն.

- շրջակա միջավայրի գերազանցված որակի չափանիշները կամ թույլատրելի նորմերը.

-ինտենսիվ հողօգտագործում.

- ազգային, Համայնքային կամ միջազգային պաշտպանության կարգավիճակ ստացած տարածքների կամ լանդշաֆտների վրա ազդեցություններ: